ԳԱՆՁԱԿԻ ԳԱՒԱՌ

ՆԻՒԹԵՐ ԱՊԱԳԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ե. Հալայեանի.

ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆ *)

Գանձակի գաւառում բնակւում են գլխաւորապէս հայեր, թուրքեր, ռուս աղանդաւորներ և գերմանացիներ։ Հայերը և թուրքերը բնիկներ են, իսկ ռուս-աղանդաւորներն ու գերմանացիները գաղթականներ։

Թուրքեր են համարւում նաև թափառական Այռումները, որոնք իրանց Ռումից (Բիւզանդիոնից) գաղթած են համարում, և իրանց կոչումն էլ բացատրում են որպէս Ա՛յ ռում (Էյ ուռում) կոչականից կազմուած։ Սրանք մահմեդական են, շիի աղանդին, խօսում են Ատրբպատականի բարբառով, մի առանձին արտասանութեամբ և ոչընչով չեն զանազանւում միւս թուրքերից։ Սրանք բնակւում են Ամիրվար, Աջի, Բիրգէօզ, Այքենդ, Դաստաֆուր, Դամջալի, Գիւնէյ, Դամի, Զագա-դարասի, Ղարաբուլախ և Ղազախ Էլչիլախ հասարակութիւնների մէջ։

Բացի Այռումներից թուրք են համարւում նաև Սաֆի-Քիւրդ Ղարաչայլի, Սաֆի-Քիւրդ Քիւրակչայլի և Ջադելի-Քիւրդ հասարակութիւնների բնակիչները, որոնք թէև աղօտ կերպով պահել են իրենց քրդական ծագման աւանդութիւնը, բայց և այնպէս թէ լեզուով, թէ կրօնով և թէ սովորութիւններով չեն տարբերւում միւս թուրքերից։

Նախկին բնակիչ Աղուանները այնպէս ձուլուել են հայերի և թուրքերի մէջ, որ հետքերն անգամ չեն նկատւում։

Կուլտուրական տեսակէտից ամենից բարձր համարւում են գերմանական գաղթականները, յետոյ ռուս-աղանդաւորները, ապա հայերը և ի վերջոյ թուրքերը։ Վիճակագրական բաժնում առաջ կը բերենք այս ժողովուրդների ինչպէս բացարձակ, այնպէս և համեմատական թուերը, այժմ տալիս ենք մի քանի պատմական և ազգագրական տեղեկութիւններ։

*) Տես Ազգ. Հանդէս, գիրք Ը.